



Հ Ն Ձ Շ Ա Վ  
ԱՆՇՈՒՆ ՍԷՐԸ

Ա. Պ. և Ա. Օ. քարեխաններու .

ես թաղապետի պատանութիւն մ'ունեցած եմ . . . .

—Տըրտում մընալ սիրէի՛ դուն ուրեք զուարթ .  
Աւելի շատ նո՞ս սիրէի զիտեղ քան վա՛րդ ,  
Աւա՛ղ, Սուգին թա՛նն էր եղեր ճակատս նըսեմ . . . .

Շուրջս ամեն բան շե՛ւ թուեցաւ . ինձ հարցուցի .

« Եթէ այսքան վըշտալից պիտ' ըլլար այս կե՛անք ,  
Բիւր բիւր աղէտք պիտ' ըլլային՝ է՛ր հոս ե-  
կանք : »  
Այս հարցն էր՝ ա՛խ , որ մաշեց սիրտս նըման ցեցի . . . .

Ուր ուրեմն . . . , հասկցայ որ մարդս՝ հէ՛ք էակ ,


Մոլորած էր ուղիղ շաւղէն զոր էն գըծեց ,  
Ու դարերու ընթացքին մէջ լացա՛ւ , հեծեց . . . .

Թըէր ինձ թէ յոյս չ'կա՛ր ալ երկնքին տակ :

Յանկա՛րձ . . . , լոյս մը ծաթեց թախծին հոգւոյս մէջ մութ ,  
Աստուածորդոյն Սէ՛րն էր անհուն , գորովա-  
գութ . . . .

27.214

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Տիրար Պալեան մեզ կը ծանուցանէ թէ Պաղար Մուրուրի Ընթերցարանին ի նպաստ եղած հանգանակութեան մէջ իր ձեռամբ տրուած գումարը 25 զրջ . է , փոխանակ 5ի , ինչպէս որ մեր առջի թուոգ ծանուցուած էր : Յիշեալ 25 զրջը վճարած են Տեարք Ս . Օտապաշեան 10 . Ս . Հաճաթեան 10 . Կ . Երզնկացեան 5 :

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Թիէն-Ձին 20 Մարտ . — Կը ծանուցանեն թէ Ռուսական զօրաց հրամանատարը , զօրավար Վակօք անգղիացի զօրավար Բամբէի ըսած է թէ անգղիացիները կամ պէտք է նահանջը ընտրեն և կամ կռուր :

Կրօնն նմանապէս թէ Վօկաք յայտարարած է թէ Ռուսերը պարտին փոխարինութիւն մը ընդունիլ անգղիացուց ոտընձըգութեան համար : Փոշիի մըրիկ մը բոլոր երկուշաբթի աւլած է պատնէշները բայց անգղիացի և Ռուս իրենց զիրքերուն վրայ անշարժ ու անսասան մնացած են :

Վիէննա 20 Մարտ . — Բէքինէն հեռագիր մը կ'ըսէ թէ Թիէն-Ձինի միջադէպը Ռուսիոյ նպաստաւոր կերպով կարգադրուած է :

Բէյթաուն 20 Մարտ . — Երեք ապտամբ Հոլանտացիներ հրացանի բռնուած են Տէ Ա'արի մէջ Թապաշի երկաթուղոյ գծին շեղուելուն յանցանքով . երկու ուրիշ Հոլանտացի 5 ական տարուան տաժանակիր աշխատութեան դատապարտուած են :

Վիէննա 21 Մարտ . — Կը հերքեն այն լուրը թէ՛ Թիէն-Ձինի միջադէպը Ռուսիոյ նպաստաւոր կերպով կարգադրուեր է . բանակցութիւնները գեւ կը շարունակուին , երկու պետութեանց միջև :

Բէյթաուն 21 Մարտ . — Անգղիացի-

ները վրէտը պարպած են և քաղաքին պահակախումբը Բամբէլ զօրավարին կիսաբաժնին միացած է , որն որ իր յառաջխաղացութեանց միջոցին մղած բազմութիւ կռուներէ . յետոյ Սթանտերթըն դարձած է 200 հիւանդներով և վիրաւորեալներով :

Լոնտոն 21 Մարտ . — Լորտ Բիչնէր Բըթթորիայէն կը հեռագրէ թէ՛ Պօթա սպարապետին եղբայրը սպաննուած է Տուրընպէրկի մէջ և երկու որդիքը վիրաւորուած են : Բարի Պօէրները դաշտերու վրայ ցըրուած են . Տը Ուէթ Հէլպրօնի մօտերը կը գտնուի :

Սելանիկ 21 Մարտ . — Ռուսիոյ կողմէ Պուլկար ապստամբներու դատաւարութեան միջոցին եղած նպաստաւոր միջամտութիւնը մեծ յուզում կը պատճառէ . որովհետեւ Ռուսիոյ Պուլկար գօմիթէին խտրել հալածման վրայ պնդելէն անմիջապէս յետոյ կուգայ այդ միջամտութիւնը :

Վիէննա 21 Մարտ . — Պուտարէսթէն կ'իմացնեն թէ սպայ մը կրակ ըրած է ոստիկանապետի մը վրայ :

Լոնտոն 21 Մարտ . — Պաշտօնական վաւերացումներէն կը հետեի թէ Լորտ Բիչնէր փափաքող է եղեր հաշտութեան կնքելուն բայց և այնպէս սպարապետ Պօթայի հետ ունեցած անհամաձայնութեան պատճառը Սըր Ալֆրէտ Միլնըրի անհաշտական դիրք մը բռնելն է եղեր :

Վաշինկթօն 22 Մարտ . — Բանէյ կըզվին Ֆիլիպեան զօրապետը անձնատուր եղած է , արշիպեղագոսին այդ մասին մէջ ապստամբութիւնը դադարած է :

Վաշինկթօն 22 Մարտ . — Միացեալ նահանգները կը թելագրեն օտար պետութեանց որ Ձինաստանի վճարելիք առգանքը 200 միլիօն տօլարի կ'ըրիկ գումարի մը որոշեն որ 8 հաւասար մասի պիտի բաժնուի :

Անվէրս 22 Մարտ . — Լուր կը շրջի թէ՛ Պօէրները Ֆրէնչ զօրավարը հրացանի բռնուած են իր տուած խօսքը դրժեւուն համար :

Անգղիացի զօրավարը Պօէրներուն դէմ զէնք առած է , զինադադարի համար որոշած պայմանաժամէն առաջ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Կիմանանք թէ՛ կը գրէ Բիրաւիս , Տամատ Մահմուտ փաշա անգղիական դեսպանատան միջնորդութեամբ բանակցութեան մտած է Սուլթանին հետ :

Սուլթանը անգղիական դեսպանին բերանացի կերպով խօստացած է փաշային կեանքը և աղատութիւնը յարգելու , բայց դեսպանատունը աւելի դրականօրէն դրաւոր խօստում մը կը պահանջէ :

— Աղէքսանդրիալուսի հարուստ Յոյն տիկին մը , Ալլի տը Կօկօ , մուլեգին տենդի մը պահուն ինքզինքը պատուհանէն վար նետած և անձնասպան եղած է :

Այդ Տիկինը վերջերս իր անձնական ծախքով Ռամէի մէջ յունական եկեղեցի մը կառուցանել տուած էր :

— Մանսուրայէն Բիրաւիս թերթին կը գրեն . Շէյխ Ալի անուն անձի մը որը համբաւաւոր էր շատ մը կիներու հետ ամուսնացած ըլլալուն համար , սա ծիծաղաշարժ դէպքը պատահած է :

Մինչև այդ օրը , Շէյխ Ալի 23 կնոջ հետ ամուսնացած էր , իր ընկերներէն մին անոր խաղ մը խաղալ ուզելով , Սիւնպէլլալին գիւղէն նոր աղջիկ մը կ'առաջարկէ կին առնելու համար , որն որ շատ սիրուն և շատ հաճելի աղջիկ մըն է կ'ըսէր : Մեր մարդը գուցէ երկու երկոտանեակ կին ունենալու փափաքէն մոլուած , կ'ընդունի ամուսնանալ իր բարեկամին առաջարկած կընողը հետ , և՛ նոյն խակ , կ'ուղէ 3 ոսկի օժիտ տալ , որուն երկուքը կանխիկ կը վըճարէ : Շուտով հանդէս մը կը սարքեն , Քեյի կը կը կանչեն ամուսնութեան պայմանագիրը վաւերացնելու , նոյն խակ վըկաներ չ'են պակտի այդ հանդէսին ատեն : Հանդէսը լրանալէն յետոյ . մեր Շէյխը իր թիւ 24 կնոջը անեալը կը մտնայ և . . . . կ'ապչի , հաստատելով որ իր նոր կողակիցը ծպտեալ մարդ մըն է , որն որ կ'սպանայ զինք ծեծելու : Խաբուած ամուսինը խոշոր քայլերով կը փախչի և կ'երթայ ոստիկանութեան կը բողոքէ , ոստիկանութիւնը քննութիւն մը բացած է ծպտելոյն ինչ սեռի պատկանիլը վերստուգելու համար :

ՎՐԻՊԱԿ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Չորրորդ երեսը Քրէտի Ծօնսիյէ Էփըս սիէնի թուականը սխալմամբ սեպտեմբեր 15 գրուած է , որ պէտք է կարգաւ 15 Մարտ :

ՎՐԻՊԱԿ ՆՈՐ-ՕՐԻ 76ԻԿ . ԹՈՒՈՅՆ

Սուտեր ստեղծելու սահմանեալ թերթին ազգային բաժնին վերջաւորութեան մէջ կը կարդանք թէ՛ « Բողոքականաց առաջնորդարանը մերժած է ևն » :

Կը հրաւիրենք այդ թերթին խմբագիրը , որպէսզի վաղու ժամը 4 ին հաճի դալ փաստաբան Տ . Ժան Պրուսալիի դրասենեակը , տեսնելու համար այն էլաւը Շէրիս , որով Ալլի Տիկին Լուսիա Մ . Ս . Մեքիքեան խնամակալ կը կարգուի իւր անչափահաս որդւոյն : Եթէ՛ նոր Օրի խմբագիրը որոշեալ ժամանակին չ'գայ տեսնել Տիկին Լուսիա Մեքիքեանի խնամակալութիւնը հաստատող էլաւը Շէրիս , « Արշալոյս » ի Տնօրինութիւնը՝ հրապարակաւ թքած պիտի ըլլայ նոր Օրի փաստաբան-խմբագրին երեսը , և այս պիտի ծանուցուի « Արշալոյս » ի մէջ միայն :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒՐԵՐ

Ս Ի Ի Ր Ի Ա Յ

Պէյրութի մաքսատան քննիչները գարեջուրի շիշ պարունակող սնտուկներու մէջ 500 հատ ուղիւղէր գտած են , ուրիշ շիշերու մէջ ալ մեծ քանակութեամբ կապար գտնուած է , ստանք բոլորն ալ Պօլիս ուղարկուած են , սնտուկներուն տէրը դեռ ներկայացած չէ իր ինչքը պահանջելու :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Սէն Բէթթրսպուրկի թերթերը կ'իմացնեն թէ Տօն Բարլօսի տղան Տօն Փէմ իշխանը Ռուսիոյ պետական արժեթղթոց մեծ թիւը շահած է որ 200000 Ռուբլի է :

Մ Օ Ն Թ Ե Ն Ե Կ Ր Օ

Մօնթէնէկրօի իշխանը Սերպիայի իմա-
ցուցած է որ կը մերժէ ականջ կախել՝ եւ-
րոպական խաղաղութեան հաւասարակշռու-
թիւնը խաւովելու դիտումով Պալքաններու
մէջ սարքուած մեքենայութեանց և դաւա-
զրութեանց : Իշխանը նմանապէս ծանուցած
է Ալպանացի խռովարարներու թէ անոնց
չ'պիտի օգնէ եթէ փորձեն օսմանեան լու-
ծը թօթափել :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

ԻՆՉՊԷՍ ԼՈՐՏ ՔԻՉՆԵՐ ՊՐԾԱՅ Ե

Հետեւեալը քաղուած է անգղիացի
սպայի մը նամակէն որ կը պատմէ թէ ինչ-
պէս Լորտ Քիչնէր ազատեցաւ Բան կայա-
րանին մէջ Պօէրնեռու լարած թակարթէն :

« Բանի կայարանը՝ կը պատմէ սպան ,
Պօէրնեռու ամենայարմար տեղն էր . հոն էր
որ միշտ կառախուձքերը կը բռնէին :

Լորտ Քիչնէր Միտտըլպուրկ կ'երթար
Սմիթս Տօրիէն զօրավարը տեսնելու և անոր
հետ Գարօլինա նահանգին մէջ կատարուե-
լիք գործողութիւնները կարգադրելու հա-
մար :

Երբ որ Լորտ Քիչնէր կասկածելի տեղը
հասաւ առջևէն շոգեկառք մը զրկեց գիծը
քննելու համար , շոգեկառքը դարձաւ և
մեքենայվարը յայտարարեց թէ սպարապե-
տը կրնար առանց վախի , ապահով կերպով
յառաջ երթալ :

Ուրիշ մարդ մը այդ տեղեկութենէն
գոհ կրնար մնալ բայց Քիչնէր բնութեամբ
կասկածոտ է և շատ սուր հոտառութիւն
ունի :

Կառախուձքին առջևէն շոգեկառք մը
և երկու ծանրաբեռնեալ վաճառաբարձ վա-
կօններ ընթացուց և այս նորատեսակ պա-
հակախմբին ետեւէն հեռուանց հետեւեցաւ :

Եւ իրաւ ալ աղէկ ըրաւ , հազիւ թէ
հազար մէթր ճամբայ դացած էր , յառաջա-
պահ կառախուձքին վակոնները ահռելի ու-
րոտմամբ մը օդը ելան և կտոր կտոր դար-
ձան : Միևնոյն վայրկեանին հարիւր հոգիէ
բաղկացած գօմանտօ մը որ պահուրած , իր
գործին վերջնական արդիւնքին կ'սպասէր ,
խոյսցաւ քանդուած կառախուձքին վրայ ,
վստահ ըլլալով որ այս անգամ պիտի գրտ-
նէր « Սէրտարին » ջախջախուած դիակը բայց
հոտառու զօրավարը պայթումը տեսնելուն
պէս հանդարտօրէն մեքենան դէպի ետ դար-
ձնել տուաւ և Պօէրնեռը միայն խեղճ մե-
քենայվարը գտան վակոններու բեկորնե-
րուն մէջ որ ծանրապէս վիրաւորուած էր :

Լորտ Քիչնէր ոչ միայն շատ մեծ մարդ
է այլ և ամենարագաւոր աստղ մը ունի :

ՏՕՔԹ ՔՕՐՆՓԷԼՏ

ՎԿԱՅԵԱԼ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիեննայի գըլ-
խաւոր հիւանդանոցներուն : Մասնադէտ
միզանցբային հիւանդութեանց , Գաղղիա-
կան ախտի , կօկորդի , քիթի և բերնի
հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ
առաջ ժամը 10 և 12 , իսկ կէս օրէ վեր-
ջը ժամը 3 և 5 , իր տունը Շէրիֆ փա-
շա փողոց , ԱՂԵՔՍԱՆԻՐԻԱ :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Աննամի մէջ անձնասպանները և կամ
կառքի տակ մեռածները բնական մահով
մեռած մարդկանց նման չեն թաղեր , այլ
հետեւեալ կերպով :

Պէտք է սպաննուած տեղերէն հող առ-
նել և 30 հատ մարդկային կերպարանք
չինել և ոտքերուն տակ դնել , դադաղին
մէջ . ապա Պօնդը (քահանայ) դիակին ալ
կողմը կենալով և մեծ արջ համաստեղու-
թան դառնալով մատովը օդին մէջ ինը վի-
շապի կերպարանք կը գծէ սապէս ըսելով :

« Հողին ալ այսուհետեւ կ'ընայ արեւ-
ելք , հիւսիս , հարաւ , արեւմուտք երթալ
և ոչ մէկ ճամբայ փակուած է »

Պէտք է զգուշանալ որ մեռեալին ե-
րեսը լուսնին հակառակ կողմը դարձած ըլ-
լայ , թաղման բոլոր ժամանակը :

Աւելցնենք թէ , հոն , ներքի է ազ-
գականի մը դիակը թաղման հանդէսին հա-
մար հարկաւոր եղած դրամը գտնելու կա-
րող ըլլալու չափ ժամանակ պահել , այ-
նուհետեւ դադաղը նոյն իսկ տան հողին մէջ
կը թաղեն :

Հանուարի մէջ կին մը կը յիշուի դեռ ,
որու դիակը այսպէս տարի մը անթաղ մը-
նաց . ապա ընտանիքը պէտք եղած դրամը
հաւաքելէն յետոյ , շքեղ յուղարկաւորու-
թիւն մը կատարել տուաւ :

ԼԱՅՅՈՒԹԷՆԻ ԱՐՁԻՆ ՄՈՐԹԸ

Անգղիական թերթ մը the Birning-
ham Weekly Mercury իր ընթերցողնե-
րուն նուէր մը որոշած է , հետեւեալ հարց-
ման ամենայարմար պատասխանին համար :

« Ի՞նչ պիտի ընենք Տը Լուէթը » :

Անգղիական թերթին բարեմիտ թըղ-
թակիցները անմիջապէս պատասխանած են
այդ հարցման այնպէս որ պատասխանի տե-
ղատարափ մը թափած է խմբագրատունը :

« Պէտք է հրացանի բռնել . անա-
պատի մը մէջ աքտորել . Պարնըմին տալ .
կտոր կտոր յօջօտել . « ինը պոչով կատուն »
դարձնել . շղթայի վարնել և այս տեսակ
հազարաւոր պոչօղաղութիւններ :

Թերթին ընթերցողներէն միայն մէկը
Շէքսպիրի « Կորիօլան » էն հատուած մը յի-
շած է որ պէտք է թարգմանել .

« Թէպէտեւ մեր հայրենիքը շատ մը
որբեր ու այրիներ կը պարտի անոր , բայց
սակայն , տակաւին վստմ համբաւի մը ար-
ժանի է » :

ՆՈՐՈՐԻՆԱԿ ԳԼԽԱՐԿ ՄԸ . — Անգղիա-
ցի մը անցեալ տարի սիգարաբ կը պտտէր
Պուլօների ծովափը գլուխը յարդէ canotier
գլխարկ մը գրած որն որ միլիօններու հետ
իսկ չ'էր փոխեր :

Այդ գլխարկը արդարեւ չինուած էր
մինակ Կալէսի իշխանին — այսինքն հիմակ-
ուան Եղուարդ 7րդ . ին սառած ըմպելիք-
ներ խմած միջոցին գործածած յարդի շիւ-
ղերով :

Այդչափ շիւղերը հաւաքելու համար
մեր տարօինակ հաւաքածոյամբը 2 տարի
չարունակ իշխանին ետեւէն պտտած էր և
իշխանին նստած սրճարաններէն մեծ զգու-
շութեամբ հաւաքած էր թանկագին ար-
քայական շիւղերը :

Հարկ է ըսել թէ իշխանին գահակա-
լութեան առթիւ մեր անհեթեթ անգղիա-
ցիին գլխարկին արժէքը եռապատկուած է
իր տիրոջը աչքին :

Սա անգղիացիները . . . :

ԻՐ ԿԻՆԸ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Քանի մը ամիս կայ , Արժանթինցի հա-
րուստ վաճառական մը Պ . Սէպասթիէն Օրտի-
կա , երկար ժամանակէ ի վեր Պուէննոս Այրէս
հաստատուած՝ լքուած էր իր կնոջմէն , որն որ
ձգած փախած էր ամուսնական յարկը , չ'մոռնա-
լով միանգամայն շնորհալիօրէն հետը տանելու
50,000 ֆրանգի մօտ գումար մը :

Խաբուած ամուսինը իր կնոջը եւ 50,000
ֆրանքին անյայտանալը ստուգելուն պէս ան-
միջական կերպով իմաց տուաւ իր երկրին ոս-
տիկանութեան :

Տիկին Օրտիկայի դէմքին նկարագրութիւ-
նը ( signalement ) հեռագրուեցաւ երկու Ամե-
րիկաներու ամենահեռուոր անկիւններն իսկ ,
Պուէննոս Այրէսի ամենէն խորամանկ և ամենէն
ճարտար լրտեսները մէջտեղ ինկան անօթի շու-
նեռու պէս , բոլոր թերթերը երկար ատեն այդ
ինչորով զբաղեցան բայց ամէն բան ի գերեւ ե-
լաւ . Տիկին Օրտիկա անգտանելի մնաց :

Աւելորդ է ըսել թէ խեղճ ամուսինը ո՛ր
է գրական արդիւնքի մը յանգելու համար . ա-
ռանց խնայելու 100000 ֆրանքի մօտ գումար ծախ-
սած էր . այս գումարը գրեթէ ծովը նետած էր .
քանի որ Տիկին Օրտիկա չ'էր գտնուէր : Պ . Սէ-
պասթիէն Օրտիկա , չուզելով բոլորովին ինք-
զինքը փճացնել , քիչ մնացեր էր որ ա՛լ հրա-
ժարեր իր կողակիցը գտնելու համար ո՛ր եւ է
նոր ձեռնարկէ՛ երբ առտու մը անձանօթ պա-
րոն մը ներկայացաւ իր գրասենակը և ըսաւ
անոր :

« Ես ֆրանսական ծանօթ գործակալու-
թեան մը թղթակիցն եմ , իմացայ ուր Տիկին
Օրտիկա այժմ Փարիզ կը գտնուի , ուր Իւնի-
վէրսիթէ փողոցը 17 թիւ շքեղ ապարանք մը
վարձած է և հոն սքանչելի կեանք մը կ'անցը-
նէ : »

Վաճառականը իր կինը կը պաշտէր բառին
բովանդակ նշանակութեամբ և մինչևեւ հոտ ինք-
զինքը տրամադիր ցցուցած էր իր կնոջը ներե-
լու համար , հոկառակ անոր ըրած անհաւատար-
մութեանը . բայց այս լուրը իմանալուն պէս ,
կ'սկսի կատղիլ և այնուհետեւ նախանձի որդն
է որ կ'սկսի իր սիրտը կրծել :

Ետեւով իր որոշումը կուտայ , ֆրանսայի
համար նաև պիտի նստէր ապա ուղղակի Փարիզ
պիտի երթար և փառաւոր վրէժ մը պիտի լու-
ծէր իր ապերաւ կնոջմէն :

Առատօրէն վճարեց այցելուին բերած լու-
րերուն համար , և առանց վայրկեան մը իսկ
խորհելու դանոնք ստուգել և ըստ այնմ վարուե-
լու համար , պայտասակները կապեց , թղթապա-
նակը պանքտոմսներով լեցուց և Պօրտօ միկ-
նոց առաջին նաւը մտաւ :

Նաւուն մէջ շուտով ծանօթացաւ ու մտեր-
մացաւ . ֆրանսացիի մը հետ , որ յայտարարեց
թէ կասթօն Պլան կը կոչուի և ինքն ալ վա-
ճառականին պէս Փարիզ կ'երթայ :

Մէկ երկու օրէն Արժանթինցի վաճառակա-
նը ալ գաղտնիք չ'ունեցաւ իր նոյն բարեկամին
համար , իր բոլոր ընտանեկան ցաւերը պատմեց
անոր , և յայտնեց թէ բացարձակապէս որոշած
էր իր անհաւատարիմ կինը սպաննել :

— Այդ բանը չ'պիտի ընէք պատասխանեց
անոր Պ . Պլան , կեղծ բարկութեամբ մը — ա-
կէց զատ խենդութիւն մը չ'ընելու համար եր-
բէք ձեր շուքէն չ'պիտի դատուիմ , միտանի մի-
եւնոյն պանդոկը պիտի իջնանք և ձեզի պիտի
ընկերանամ Իւնիվէրսիթէ փողոցը :

Պօրտօ հասնելուն , երկու բարեկամները
անմիջապէս Փարիզի ձեպընթացը նստան , և
փետրուար 16 ին Օրլէսնի կայարանը հասնելով
շուտով Սօրպօն թաղը երկու յարակից սենեակ-
ներ վարձեցին :

Հետեւեալ օրը առաջին ժամուն Պ . Սէ-
պասթիէն Օրտիկա միշտ ընկերացած իր անբա-

ժանկի բարեկամով, Իւնիվերսիթէ փողոցը 17 թիւ փողոցը գնաց, ուր կը յուսար իր սիրական կինը գտնել: Բայց ի մեծ յուսախաբանութիւն մեր Արժանթինցի վաճառականին, ապարանքին դռնապանը պատասխանեց թէ՛ տունին մէջ միայն ամուսնացեալ մարդիկ կային որոնք երկար տարիներէ ի վեր հոտ կը բնակէին:

Դժբաղդ ամերիկացին յուսահատած էր... : — Լինցա՛ւ հառաչեց գրեթէ լալով — ալ վերջին յոյս ալ մարեցաւ... : Սակայն Պ. Պլան յաջողեցաւ անոր քիչ մը քաջասրտութիւն ներշնչել:

— Չեղի լուր տուող անձը անպատճառ հասցէն սխալած ըլլալու է ըսաւ անոր — ես Փարիզը գրգռանիս պէս կը ճանչնամ, վաղուցնէ ըսկսեալ կ'սկսինք մեր խուզարկութիւնները. ձեռնէ 8 օր պայմանաժամ կը պահանջեմ, կիներն իր գտնալու համար:

Ենդ մարդը արդէն համոզուիլ կ'ուզէր, ա՛յնչափ կը սիրէր իւր կինը, որ չ'էր ուզեր բոլորովին յուսահատիլ, հետեւարար սրտի զեղումով շնորհակալ եղաւ իր անձնուէր բարեկամին եւ սկսաւ քիչ մը վստահութիւն ունենալ:

Յաջորդ օրը Պ. Պլան կը յայտարարէ թէ՛ ոստիկանատուն պիտի երթայ գամբսերէն խընդրելու համար որ իրենց տրամադրութեան տակ մէկ քանի ճարտար ոստիկաններ դնէ:

— Դուք ալ ձեր կարգին, միեւնոյն ժամունակին ձեր կառավարութեան դեպքանատունը կ'երթաք, անոր պաշտպանութիւնը խնդրելու, ցորեկին հոս կ'ըլլամ:

Վաճառականը կէտ առ կէտ այդ խրատին հետեւեցաւ: Երբ ցորեկին մօտերը պահող դարացաւ եւ սպասուորին հարցուց թէ Պ. Պլանը արդեօք վերադարձած էր. վերջինը իրեն հասկցուց թէ՛ իր մեկնելէն քանի մը վայրկեան յետոյ Պ. Պլան երկու կառքով վերադարձած էր, որոնց վրայ բեռնուցած էր բոլոր պայուսակները, ապա կառավարին հասցէ մը նետած էր, եւ կառքերը ամենամեծ արագութեամբ հեռացած էին:

Այս աղէտը լսելուն պէս, քիչ կը մնայ որ եր Պ. Օրտիկան մարէր. պայուսակներէն մէկուն մէջ կը գտնուէր իր թղթապանակը որ իր հետը բերած բոլոր գրամը կը պարունակէր մասաւորապէս 20,000 ֆրանքի մօտ գումար մը:

Շատ դիւրահաւան ու վստահեցող Արժանթինցին ուրիշ միջոց չ'ունեցաւ՝ ալ միայն ոստիկանական գամբսեր Պ. Օրտիկանի վրայ եւ պատմել իր գլխէն անցած բոլոր դժբաղդութիւնները. գամբսերը պիտի խորհի Պուէնոս Այրէս փոխադրել տալ պարզամիտ վաճառականը, որ ալ բոլորովին վազ անցած է իր սիրելի կողակիցը գտնելէ, որուն երեսէն այնչափ փորձանքներու մէջ ինկած էր:

Ենդ մարդուն յանցանքը, աղքատ անուստիկան մը ըլլալն է եղեր, որ Աստուծոյ տուած պատուէրին համաձայն իր կնկանը ետեւէն վազեր է... : Եթէ առաջին օրէն Աստուծոյ պատուէրը միտք չ'ընելու եւ իր ծախսելու տրամադրուած գումարով նոր կին մը ծախաւ առնէր, թերեւս շատ արժան պիտի մնար ըլլար եւ փորձանքներէ ալ ազատ պիտի մնար, բացի նոր առնելիքէն... :

1937թ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԲՐԷՏԻ ՅՕՆՍԻԷ ԷԺԻԲՍԻԷՆԻ 15 Սեպտեմբեր 1901

Table with 5 columns of numbers: 336285, 49769, 54575, 60255, 91441, 117261, 152114, 190771, 192789, 192921, 207527, 207813, 219604, 226883, 229678, 231935, 288655, 317796, 323012, 330443, 365433, 368582, 374748, 377149, 380020, 385316

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅՈՒ ՎԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՄՏԵ ԵՒ ԿԱՐԵՐՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՆՈՒՄ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ Ապահովագրութեան կրթածնէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրութեան արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ որ գրեթէ այսարհի ուրիշ սրև է ընկերութենէ մէկ միլիար աւելի է: Ս. ԼԷՕՆԱՐ բնդհանուր ներկա. յացուցիչ ի Գահիրէ: Այսարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը դառնէ: ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յ'Աղեքսանդրիա: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԷՉ ՊԱՅՈՒՐԵԱԿ — ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ

Ս Ի Ն Կ Ե Ր ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻԿԵՐ ՈՒՆԻ Այսարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐՉ ԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վկայականներով եւ մեքայնեով վարձատրուած. Երաշխաւորեալ մեքենաներ:

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսի մէջ ստացած է: ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՐԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԿԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ԶԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԽՅԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐԻ յասկանչիւն: ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ



Չրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ: Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւն հին մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՄԱՆԿԱԲԱՐՉ ՏՐԻԿԻՆ ՍՈՍԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ Եւրա-Ապսխալ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն փոխադրած է Շարա Ապտիւլ Աղիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց, Անիէս պէյ Ապտիւլ Բազդի 20 թիւ սեփականութեան մէջ: Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիրէքնակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԶԵ ԱՐՇԱԼՈՅՍԻ ԶԻՄԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900 ԾԱՌԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶԲԸ Օսմանիյէ դեղատանին դիւնացի փողոցի մէջ:

Table with 6 columns of numbers: 6359, 4644, 7373, 113, 384, 60, 207, 347, 1244, 1794, 3107, 4227, 5918, 6384, 6675, 6993, 7012, 7346, 8257, 8518, 8645, 8678, 8845, 8857, 9159, 9306, 9986

Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին: Այցեխարտեր, Երաշխաւորեալներ, Գիտելու, Հրաւիրագրեր, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ: Կը վաճառուին հետեւեալ գրքերն. 1. ԲՆԱՇԻՍԱՐՀԻԿ ԲՃՈՒՍԱՆԻ Ի Ա. Ե Բ. պրակներն: 2. ՈՐԲՈՒՆԻ որոյ թուրքիա մուտքը ինչպէս կը ընենք, արգիլուած է: 3. ՀԱՆԱԲԱՆՈՑ հայոց ժողովրդական երգերու: